ԱՄԵՆԱՅՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ
Պարբերական ուղղուիլ առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅԿ»ի
ՏՈՔ. Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ.

Ձեռագիրք Ձեն Վերադարձուիր

—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ

ՀԱՅԿ

HAIK
ARMENIAN POLITICAL AND HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A
To whom all communications must be addressed.
Terms for all Countries.
One Year - - - - $ 2.00.

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M D.
Տէր-Խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա. ՏԱՐԻ | ՆԻՒ ԵՕՐՔ ԱՊՐԻԼ 15 1891 | ԹԻՒ 8

Entered as second-class mail matter. at P. O. New York.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օտար Մամուլն և Հայկական Խնդիրն — «ՀԱՅԿ» առ «Փիսմէյքըր» — Ինչպէս կրնայ Ռուսիոյ և Հայաստանի միջեւ պատերազմի առջեւն առնուիլ — Ցակոբ Փաշա Գաղաղեան — Նամակ Կիլիկիաէն — Կեդրոնական Յանձնախումբն — Հայկ. Միութեան Ապրիլ 11 ի նիստն — Հայեր և Դուռն — Նոր Պլիու Պուքէն — Այլ և այլք։

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

Մեր նախորդ թուով արտատահմանում աշխատող Հայ Գործիչներու մասին կը խօսէինք. արժան է նկատել այն օտարազգիներ եւս որք մեր դատին վերայ կը գրեն թերթերու մէջ։ Ասոնց բանք, այնու զի օտարական և անաչառ քննողի բանք կը համարուին, աւելի կը ազդէն հանրային կարծեաց քան զՀայ Գրչացն։ Օտար Գրողաց ոմանք կարեւոր թերթերու խմբագրութիւնք են, և ոմանք՝ յօդուածագրեր։ Անգղիական Մամուլն է որ Հայկական խնդրով կը զբաղի առաւել քան ո և իցէ Եւրոպական Տէրութեան Մամուլ։ Այս դիւրահասկանալի է, քանի որ Անգղիա կրկին դաշնագրերով Թուրքիոյ և Հայաստանի հետ կապուած է, և Ռուսիոյ յառաջխաղացութեան դիմադրելու ուխտեալ։ Գոնէ Անգղիականին չափ ռուսական Մամուլն եւս պարտէր զբաղիլ մեր խնդրով, սակայն այնպիսի պատճառներու համար որոց վերայ աստ պատշաճ չեմք համարիր խօսիլ, երկրորդական կարեւորութիւն միայն տուաւ ընդ երկար և վերջերս ալ անհամակիր գրուածներ միայն կը նուիրէ այնմ։ Գռանսական Մամուլն, իբրեւ մամուլ այն ազգին որ իւր վեհանձն համակրութեամբ առ փոքունս՝ նշանաւոր հանդիսացած է յանցելումն, ողբալի կերպիւ շեղած է իւր աւանդական ուղղութենէն, և Ռուսական քաղաքականութեան կը համակերպի հնարաւորին բոլոր չափովն։ Գռանսական այս անարժան դիջում ունի իւր թեթեւացուցիչ պարագային, այն է միջազգային արդի կացութիւնն որ անհրաժեշտ պէտք մ'ըրած է Գռանսայի համար Ռուսիոյ աջակցութիւնն։

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Մամուլն Եւրոպայի միջազգային խնդրոց վերայ կը խօսի իբրեւ հանդիսատես մանաւանդ, ըստ որում այս երկրին «աւանդական քաղաքականութիւնն կ'արգելու Եւրոպական ազգաց գործերուն միջամտելէ և այն երկրաց կառավարութիւնքն եղանակաւորելու կամ ուղղելու վերաբերութեամբ Պետութեանց դաշնագրերուն ընկերակցելէ,» որպէս կ'ըսուի Միացեալ Նահանգաց Կառավարութեան Քարտուղարին կողմանէ Նիւ Եօրքի Հայ Գաղթականութեան աղերսագրոյն տրուած պատասխանին մէջ։ Այս այսպէս լինելով, Ամերիկեան Մամլոյն մասնակցութիւնն Հայկ. Խնդրոյ յուզման՝ մասնաւոր արժէք մ'ունի իբրեւ Մամլոյն այն ազգին որ անձնական շահ չունի այդ խնդրոյ մէջ։

Մեր ընթերցողաց ծանօթ է Ֆիլատէլֆիոյ «Փիսմէյքըր» ամսաթերթին, որ ցարդ երեք յօդուածներ նուիրած է Հայկական խնդրոյն, յայսմ մասնաւոր աշխատակից ունենալով զՄր. Ռոպէրթ Սթայն։ Մարտի թուոյն մէջ կը գտնուի Գ. յօդուածն, զորոյ թարգմանութիւնն, փոքր ինչ համառօտեալ, կուտամք քիչ մի հետուն։ Մեք պարտ անձին համարեցանք յատուկ նամակաւ շնորհաւորել զ«Փիսմէյքըր» իւր այս յօդուածոց համար, մանաւանդ որ իւր գլխաւոր խնդրոց կարգն դասելով միշտ շարունակելու դիտաւորութիւնն ալ յայտարարած է։ Մեր նամակի, որ հրատարակուած է հայասէր թերթին Մարտի թուոյն մէջ, թարգմանութիւնն եւս կը դնեմք ի տորեւ։

Նշանաւոր յօդուած մ'ալ Պոսթընի Ա թ լ ա ն թ ի ք Մ ը ն թ լ ի ամսաթերթին Ապրիլ թուոյն մէջ կը գտնեմք։ Հեղինակն է Մր. Ս. Կ. Ու. Պէնճէմին, որ անցեալ տարի «Քրիսչըն Եուներն»ի մէջ եւս «Խօսք մի թրքական Խնդրոյն վերայ» խորագրով յօդուած մի հրատարակած էր (տես թիւ Օգ. 14 1890) որում մեք յայնժամ պատասխանեցինք (տես նոյն թերթին Սեպտ. 4 ի թիւն)։ Մր. Պէնճէմին իւր տեսութիւններ սակաւ մի բարեփոխած կը թուի յայնմ հետէ, և սակայն իւր գր-

ուած այս անգամ եւս կը պարունակէ բազում պատմական սխալներ և թիւր դիտողութիւններ: Ի վերայ այսր ամենայնի իւր թրքասէր յօդուածն զուրկ չէ շահեկան խորհրդածութիւններէ Հայոց համար, և ուստի անոր թարգմանութիւնն եւս, մեծապէս համառօտեալ, կուտամք մեր ներկայ թուով, յաջորդին վերապահելով մեր քննադատութիւնն:

«ՀԱՅՐ»
ԱՌ
«ՓԻՍՄԷՅՐԸՐ»

«ԽԱՂԱՂԱՐԱՐՆ» ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

(Թարգմանեալ Փիսմէյքբրի Մարտի թիւէն)

Երախտագիտական անկեղծ զգացմամբ է որ կուգամ ողջունել զ«Խաղաղարարն» իբրեւ Ամերիկեան առաջին ախոյեանն Հայկական Խնդրոյն:

Նիւ Եորքի բոլոր թերթերն շնորհաւորտ կացուցած են զմեզ մերթ ընդ մերթ ջատագովելով Հայոց պահանջներն, սակայն «Խաղաղարարն» է որ հրապարակային յանձնառութիւն ըրած է գրչի պայքար մի անդուլ մղելու վասն Հայաստանի: Այսու կը դասի նա ի շարս մեր Բրիտանական մեծ ախոյենից — Տեյլի Նիւզի, Մանչէսթըր Էկզէմինըր էնտ Թայմզի, և Մանչէսթըր Կարտիընի:

Մեզ նոր քաջալերութիւն մ'է այն զի «Խաղաղարարը» ձեռք առած է մեր դատն իբր մին իւր գլխաւոր խնդրոց, և այնքան աւելի մեծ է քաջալերութիւնն որքան երկու դերազանց յօդուածներն արդէն հրատարակեալ յէջս իւր՝ յայտնապէս արտադրեալ են այնպիսի մէկուն կողմանէ որ հմուտ է խնդրոյն և քաջ իրազեկ՝ ճշմարիտ բնութեանն մեր պահանջմանց: Մեք Հայքս հետամուտ չեմք քաղաքական անկախութեան, այլ՝ վարչական ինքնօրինութեան: Մեր Պատրիարքունք ի բազմաց հետէ ներկայացուցած էին մեր արդար և չափաւոր խնդիրքն նոյն ինքն Սուլթանաց, այն յուսով թէ կայսերական միջամտութիւն մի պիտի վախճան տայր քրդական վայրագութեանց և թրքական հարստահարութեանց, սակայն բոլորովին յուսավրէպ եղած էին: 1878 ին, Կայսր Պալատին հաւանութեամբ, մեր Ազգն պատուիրակութիւն մի յղեց ներկայացնելու մեր պահանջմունքն Պէրլինի Վեհաժողովոյն: Սուլթանն այն ատեն Ռուսական յաղթանակաց հզօր ազդեցութեան ներքեւ գտնուելով՝ արամադիր էր Հայկական գաւառաց վիճակն ենթարկել միջազգային կամ Բրիտանական հսկողութեան: Սակայն այդ ազդեցութիւն և անոր արդիւնքն եղող բարի տրամադրութիւնն ատիճանաբար չքնեղան, շնորհիւ անհոգութեան Անգղիոյ, որ չծեծեց երկաթն մինչդեռ տաք էր և Պալատն Հայոց նկատմամբ բոլորովին ուրիշ քաղաքականութիւն մ' որդեգրեց:

Մեր այժմու մրցումն է գերւոյն մրցումն. ընդդէմ տերոջն, ակարին՝ ընդդէմ հզօրին, իրաւանց՝ ընդդէմ զօրութեան, և ով որ, նման «Խաղաղարարիդ» կուգայ մեզ յօգնութիւն վեհանձնօրէն, կը վաստակի յաւերժական երախտագիտութիւնն այն ժողովրդեան որ կը բաղձայ իւր արդար դատ շահիլ խաղաղական միջոցներով եթէ գարելի է, բայց որ կը պատրաստուի ամենայն անբաղձալի հարկաւորութեանց եթէ պատահի որ քաղաքակիրթ աշխարհն փախցունէ դեռ եւս պատեհ առիթն «զարնելու ժամանակին այն մէկ ասեղն որ ինն ասեղյեսոյ զարնելէ կ'ազատէ:»

Մ. Ս. Գաբրիէլեան
Խմբագիր «ՀԱՅՐ»ի »

ԻՆՉՊԷՍ ԿՐՆԱՑ ՌՈՒՍԻՈՑ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌՋԵՒՆ ԱՌՆՈՒԻԼ

(Փիսմէքբրի Մարտ ի Թուէն Թարգմանեալ)

Թէ արդեօք Հայոց գանգատներն արդար են, զայն չունիմ քննել ասա, այլ կը չատանամ ասելով թէ, ըստ իմ կարծեաց, նոցա բողոքներ մեծ մասամբ հիմնաւոր են: Կարեւոր իրողութիւնն այն է զի այս գանգատներ ընդունած են Եւրոպացւոց և Ամերիկացւոց մեծամասնութեան կողմէն, և զի այսպէսով բարեկարգութիւն պահանջող հանրային կարծիք մի ստեղծուած է: Այս հանրային կարծիքն էր որ դատապարտեց զԹուրքիա, արեւելեան քրիստոնէից համար Եւրոպայի այս համակրութիւնն էր որ քաջալերեց զՌուսիա միջամտելու ի Պուլկարիա և արգիլեց զԱնգղիա այդ միջամտութեան դի մակալելէ: Ընդ հուպ հանրային համակրութիւնն այնպիսի ատիճանի մի պիտի հասնի զի Ռուսիա պիտի համարի թէ կրնայ ապահովապէս արշաւել յԱրմենիա, և յայնժամ ահաւոր պատերազմ մի պիտի ունենանք:

Ասոր առջեւն առնելու համար Հայք կը պահանջեն ատիճան մի ինքնօրինութիւն:... Այս կարգադրութեան դէմ Սուլթանն առարկութիւն մի կը յարուցանէ: Վերջերս Անգղիացւոյ մի հարցուց նա թէ վասն է՞ր Անգղիա ինքնօրինութիւն չշնորհեր Իռլանտայի: «Վասն զի, պատասխան տրուեցաւ, այդ պիտի առաջնորդէր զմեծն Բրիտանիա յանդամատումն: «Ճիշդ այդ է ըսաւ Սուլթանը, պատճառն որոյ վասն և ես չեմ կարող ինքնօրինութիւն շնորհել Մակեդոնիոյ:» Անշուշտ մի և նոյն պատճառն է որ թոյլ չտար Նմա ինքնօրինութիւն շնորհել Հայաստանի:

Սակայն իրօք այս երկու դէպք — Մակեդոնիային և Հայաստանին — շատ տարբեր են իրարմէ: Մակեդոնիոյ կողմն Թուրքիա լաւ պաշտպանեալ չէ: Հաւանական չէ որ ռուսական բանակ մի նորէն խաղայ Ռումանիոյ և Պուլկարիոյ մէջէն, ըստ որում այս երկու երկիրք իրենց անկախութեան յետին ատիճան նախանձախնդիր են և ցյետին շունչ պիտի պաշտպանեն իրենք զիրենք, թող որ Աւստրիական օգնութիւնն ալ դեռ կը մնայ ի հաշիւ առնուլ: Կերեւի թէ Թուրքեր լաւ հասկցած են զայս: Իրենց արեւմտեան պատնէշն — Պուլկարիա — զօրացնելու համար, ըրիկ թոյլտուին Արեւելեան Ռումելիոյ միացման ընդ Պուլկարիոյ, ինչ որ կարող էին արգելուլ կատարեալ դիւրութեամբ: Հայաստանի կողմն, ընդհակառակն, Ռուսիա և Թուրքիա իրարու կը հպին երկու հարիւր մղոն: Տուր ինքնօրինութիւն Հայոց, և Ռուսիոյ ու Թուրքիոյ միջեւ դրած կը լինիս ինչ որ գնդապետ Պէլ կը կոչէ «Քրիստոնեայ ցնցարգել տէրութիւն մի,»

որ պիտի պաշտպանէ զԹուրքիա յարեւելից կուսէ, ճիշդ ինչպէս Պուլկարիա կը պարսպէ զայն յարեւմտից։

Այլ տարբերութիւն։ Մակեդոնացիք ցեղով կամ Ցոյն են կամ Պուլկար, իւրաքանչիւր իւր անկախ Հայրենակցաց սահմանին վերայ։ Տուր նոցա ինքնօրինութիւն, և իսկոյն պիտի մտաբերեն միանալ Յունաստանի և Պուլկարիոյ հետ։ Հայաստանի մէջ վիճակն ճիշդ ասոր հակառակն է։ Ապաքէն Հայոց մեծ բազմութիւն մի կը բնակի ի Ռուսիա, այլ դժգոհ՝ ռուսական ոստիկանութեան դրութենէն։ Տուր ինքնօրինութիւն Օսմանեան Հայոց և նոքա, հեռի Ռուսական Հայոց հետ միանալու գաղափարէն, իրրեւ ինքնօրէն, նախանձելի պիտի հանդիսանան իւրեանց ռուսահպատակ եղբարց որք ընդ բռնապետ կառավարութեամբ կը հեծեն։

Քանզի տարակոյս չկայ թէ Ռուսք տանջի և երկիւղալի են Հայոց։ Հայք 4000 տարուան քաղաքակրթութիւն մ'ունին իրենց ետեւ, և կը խորհին թէ լիովին կարող են իրենք զիրենք հոգալ։ Անոր համար կարի տաղտկալի կը գտնեն կառավարութիւն մի որ իրրեւ անչափահաս կը նկատէ իւր հպատակներ։ Սակայն իբր այդ կառավարութեան հետ փոխանակելին ալ այնպիսի իմն է որ իւր հպատակներն իբր իւր որսերն կը նկատէ, բնականապէս նախամեծար կը համարին անչափահաս նկատուիլ։ Անգլիացի մի վերջերս հետաքրքին եղաւ այս մասին և գտաւ թէ բոլոր նշանաւոր Հայեր աւելի կը սիրեն մնալ ընդ Թրքական կառավարութեամբ «ցորչափ Անգղիա հասատգաւաղան մի Սուլթանին վերայ բռնէ։» Սակայն եթէ իրք թողուին ներկայ վիճակին մէջ, նոքա սիրով պիտի ողջունեն ռուսական միջամտութիւնն։ Թող Ռուսք այժմիկ արշաւեն Հայաստան, և պիտի գտնեն բոլոր ճանապարհներուն վարայ Հայ բարեկամներ. տուր ինքնօրինութիւն Հայաստանի, և Մոսկոֆ յարձակողք պիտի գտնեն ամէն մայտռի ետեւ անողոք թշնամի։

Այս այսպէս լինելով Սուլթանն... որ կը բաղձայ պահպանել իւր Պետութիւն, քան զամենայն ճարտար քաղաքական քայլն առած կը լինի եթէ ինքնօրինութիւն շնորհէ Հայաստանի։ Օտար արշաւանաց վտանգն չարունակ սնուցանող ապստամբ գաւառի մի փոխան՝ անկած պիտի լինի այդ արշաւանքն յետս մղող հզօրագոյն պատնէշն։ Ցամաքէն լինելիք յարձակման վտանգն այս կերպիւ կը բարձուի, և ծովէն գալիք յարձակումն ալ դիւրաւ կրնայ արգիլուիլ բրիտանական նաւատորմով։ Թուրքիա այսպէս ապահովեալ, կրնայ իւր ուշ և ուրուշ նուիրել ներքին բարեկարգութեան, որ այժմ չարաչար կը խոչընդոտի պատերազմի մշտակայ երկիւղէն։ Այսպէս Հայկական ինքնօրինութիւնն պիտի լինի փրկութիւն Տաճկաստանի։

Ռոպէրթ Սթայն

«Օսմանեան վարչութիւնն, գոնէ քրիստոնեայ հասարակութեան մասին կենդանի ուրացում մ'է այն տարբերման սկզբանց որոց վերայ քաղաքակիրթ կառավարութիւնն հիմնեալ է։ —Անոր դէմ ելնել առաքինութիւն մ'է, անոր թոյլտու լինիլ ոճիր մ'է»—

ԲԵՐԱՆ ԿԼԱՏՍԹՐՆԻ

ՅԱԿՈԲ ՓԱՇԱ ԳԱԶԱԶԵԱՆ

Յորմէ հետէ Օսմանեան Պետութիւնն ի Կ. Պոլիս Բիւզանդեան Պետութեան յաջորդած է, Հայ և Ցոյն տարբերաւ իմացականութեան կոթնած է Օսմանցին թէ քաղաքական թէ քաղաքային վարչութեան մասին, և ինքն մանաւանդ զբաղած է սուրն յաջ և յահեակ մեկնելու ի կողմ մօտաւոր և հեռաւոր դրացեաց։ Թուրքն քակել քանդել, խոցխոցել և սպաննել, ուտել և խմել, ձի հեծնել, հագուիլ, սգուիլ գիտցած է, և այդ բաներուն տրուած է իւր խելք ու միտք մանկլեան, իսկ հաշուելու չինելու, սնուցանելու և խորհելու դժուարութիւններն բարձած է հպատակ քրիստոնէից ուսերուն վերայ։ Ճիշդ ինչպէս որ արուեստի և արհեստի ամէն աստիճանաց և կարգաց մէջ գլխաւորապէս Հայն է եղած աշխատող և շինող, իսկ Թուրքն եղած է վայելող, մաշող և սպառող, այնպէս ալ պետութեան բարձրագոյն շրջանաց մէջ օրէնք գրող, դաշնագիր պատրաստող, արտաքին և ներքին քաղաքականութեան խնդիրներն ուսումնասիրող և վարողներն Հայերն Ցոյներն և Հրէաներն եղած են ընդ բարձր հրամանաւ Թուրք Տեարց։

Հայերն իմացական աշխատողներն եղած են կառավարական բարձր շրջանակաց մէջ, բայց առանց բարձր աստիճաններն և պատիւներն վայելելու։ Խորհրդատուիս, օգնականի և քարտուղարի խոնարհ դիրքերն ընդհանրապէս գրաւած են, և այդ դիրքերէն է որ իրենց գերակայ Թրքաց դժուարին պաշտօններն իրօք կատարած են։

Դժուարին և բարձր պաշտօններու մէջ դժուարագոյն և մէկ իմաստով՝ բարձրագոյն պաշտօնն է ելմտական նախարարի պաշտօնն։ Թրքին բոլոր բաղձանքն ուտել է, իրրեւ նախարար իրրեւ դատաւոր, իրրեւ կառավարիչ, իբր քարտուղար ուտել, իբրեւ կարդացող, իրրեւ կրօնաւոր, իբրեւ զինուոր ուտել, դարձեալ ուտել և շարունակ ուտել։ Այս ուտող աղգին ելմտական նախարարութեան վարչութիւնն տեսնել քրիստոնէի՝ յանձնուած, այսինքն արտադրող և վաստկող սարուկներու ցեղին պատկանող մէկուն...ի՞նչ բան կրնայ աւելի գայթակղութիւն պատճառել իսլամաց։

Եւ սակայն Սուլթան Ապտիւլ Համիտ այդ գայթակղութիւնն տուած է իւր իսլամ ժողովրդեան՝ ընտրելով Հայ մի, զՑակոբ Փաշա Գազազեան, ելմտական նախարար։ Պահած է զայն տարիներով ելմտական նախարար, և վերջապէս ընդունած է անցեալ օր այդ Հայ նախարարի երկրորդ կամ երրորդ հրաժարականն։

Տեսնենք ով է այս Հայն, և ինչ լոյս կուտան մեզ իւր պաշտօնավարութեան և հրաժարի հանգամանք։

Յակոբ Գազազեան ծնեալ է ի Կ. Պոլիս 1833 ին և ուստի է այժմ 58 տարեկան։ Իւր ծագումն է հասարակ բայց պարկեշտ ընտանիքէ։ Միջահասակ, վայելչադէմ սեւ աչօք և յօնօք, պատկառելի և միանգամայն համակրելի երեւոյթով անձ։ Հմուտ է Հայերէնի, Ֆռանսերէնի և Տաճկերէնի։ Վարած է դատական և ելմտական պաշտօններ, և իւր կարողութեան և պարկեշտութեան փայլուն ապացոյցներ տալով՝ տակաւ աւելի բարձր և դժուարին պաշտօններու հասած է։ Երբեմն Օսմանեան

Պանքային մէջ բարձր պաշտօն վարեց։ Թղթակցութեանց և թարգմանութեանց Դիւանին Պետն եղաւ։ Վերջապէս Սուլթան Համիտ իւր անհուն ստացուածոց խնամքն յանձնեց նորա ձեռքն։ Կայսրն յանչափս գոհ լինելով Յակոբ էֆէնտիի այս պաշտօնավարութենէն — ըստ որում ահագին աճումն առին իւր ստացուածք և եկամուտ չնորհիւ այս ճարտար պաշտօնէին — բարձրացուց զնա վէզիրութեան աստիճանն, և կոչեց զնա ելմտական նախարարի փափուկ և կնճռուտ պաշտօնին։

Առաջին անգամ էր որ Հայ մի ելմտական նախարար կը լինէր։ Բոլոր նախարարք դառնացան։ Սինէքիւրով ապրողներուն բազմութիւնն մրմռալ սկսաւ։ Թուրքք սովորած էին ուտել և վատնել այնքան անխնայ և անկանոն կերպիւ որքան հնար է։ Յակոբ փաշա կարկառեալ ծոյլ ձեռաց հարիւրներն ունայն ետ դարձուցանելով հազարաց սիրտն վիրաւորեց։ Աւագանւոյն անդամ թոշակներն սկսան նոր չափերու ենթարկուիլ։ Անպաշտօն Յանձնախմբեր կային հնուց մնացած, այսինքն Յանձնախմբեր որք կը մնային դեռ և թոշակ կ'առնուին թէեւ իրենց պաշտօն չատոնց աւարտեալ էր։ կացին ի ձեռին այս Հայն սկսաւ անպտուղ ճիւղերն և ծառերն քշտել կարել որպէս զի սնունդն բաւէ պաղատուներուն։

Նախարարաց խորհրդոյ մէջ Մեծ — Եպարքոսն և Յակոբ Փաշա առաւել քան կծու խօսքեր փոխանակեցին, և Հայ նախարարն իսկոյն հրաժարեցաւ։ Սուլթան Համիտ չէր ուզեր նորա հրաժար։ կոչեց գժտեալներն, զնոսա յորդորեց ի համբոյր հաշտութեան և Յակոբ Փաշա նորէն ընկալաւ իւր դժուարին պաշտօն։

Տաճիկք կուլտուին զայս մեծ դառնութեամբ։ Յակոբ Փաշա շարունակեց իւր բարեկարգութիւններ ելմըտական։ որոց երկիրն ա ն հ ն ա ր ի ն պ է տ ք ունէր։ Արդարեւ երկրին կեանքն,ապագայն էր որ կը փրկուէր։ Սակաւ Թուրքք կ'ըմբռնէին զայս։ Նոքա աւելի կը տեսնէին բարեկարգութեանց անմիջական արդիւնքն, որ էր իրենց թոշակաց կամ այլազան մտից նուազումն։ Թուրքըն կ'ուզէ իւր քրիստոնեայ կովն կթել, թէեւ անոր ստինքն չորնալու վրայ են և պտկունքն պատռտած, տակաւին կթել կաշխատի, այն պէս որ կաթի փոխան արիւն գալ սկսած է։ Յակոբ Փաշա կ'աշխատէր ուստող բերաններուն չափ դնել, ծոյլ ձեռքերն իգործ ստիպել,չը թողուլ որ կաթն վատնեն և թափեն, և այս այնքան յօգուտ խեղճ կովուն որքան կաթնկերաց։

Սուլթան Համիտ կը թուի զայս ըմբռնած լինիլ առաւել քան այլ ամենայն Թուրք։— խոստովանիլ պէտք է զայս յանուն ճշմարտութեան — և սակայն իւր մոլեռանդ և անձնասէր ազգին բարձրագոյն դասերուն գոնէ չկրցաւ երկար ատեն գլուխն խոնարհեցուցանել հարկին առջեւ։ Թուրք նախարարք չեն ուզեր Հայ մի տեսնել իրենց հացն ջամբող, թէեւ Սուլթան Համիտ կը սիրէ զՅակոբ Փաշա որքան Փարաւոն սիրեց զՅովսէփ։

Ուրեմն ճշմարիտ է թէ Թուրք բարձրագոյն դասն զեղծ է, անձնասէր է, և թափուր՝ հայրենասիրութենէ, թափուր՝ հեռատեսութենէ։

Ուրեմն ճշմարիտ է թէ Սուլթան Համիտ իւր Պետութեան ապագայն ըստ կարի կը հոգայ և իրեն լաւ երեւցած միջոցներն կ'ուզէ գործածել թէեւ հարկ լինի իւր ազգին անհաճոյ երեւիլ։

Ուրեմն ճշմարիտ է թէ Սուլթան Համիտ իւր աւագանւոյն մոլեռանդ և անձնասէր ճնշմանց վերջապէս տեղի կուտայ և ձեռնթափ կը լինի այնպիսի միջոցներէ որք իրեն փրկարար կ'երեւին։

Ուրեմն ճշմարիտ է թէ Օսմանեան Պետութիւնն իմեծ վտանգի է մանաւանդ Տաճկին մոլեռանդութենէն և զեղծմունքէն քան Ռուսին սրէն։

Զմոռնանք յիշել դեռ ուրիշ ճշմարտութիւն մը։

Յակոբ Փաշա մեր ցեղին պատիւ կը բերէ իւր հանճարով և պարկեշտութեամբ։ Նա հասարակ մահկանացու մի չէ։ Առանց բարձր բնաւորութեան կարելի չպիտի լինէր նմա այնպիսի քաջութեամբ դէմ դնել տարիներով Թուրք հակակրութեան պաշտօնական հոսանքին։ Դիւցազնական ճիգ և գերազանց խոհեմութիւն միանգամայն հարկաւոր են պաշտօնակից նախարարաց հետ դիւրաբեկ համաձայնութիւն մի այնքան երկար պահպանել կարենալու համար։ Յակոբ Փաշա կրնար ամէն պաշտօնակցի հաճելի և Տաճկաց բարձր դասերուն սիրելի լինիլ եթէ զեղծումներն բարեկարգելու այնքան չաշխատէր, եթէ աչք գոցէր յափշտակող ձեռքերու, եթէ, իմի բան, ուրիշ Թուրք պաշտօնէից օրինակին հետեւէր։ Սակայն ո՛չ։ ինքն իւր բարձր շաւղէն ընթացաւ ցվերջ։ Աւելի ընտրեց հաւատարիմ լինիլ իւր պաշտօնի քան թէ հաճելի իւր պաշտօնակցաց։

Բարձրաձայն և հպարտութեամբ կը յայտարարեմք թէ բոլոր Թուրք ազգին մէջ չկայ Տաճիկ մի որ Յակոբ Փաշայի չափ հայրենասէր լինի, որ իւր շահ և պաշտօն զոհէ իւր խըղճին, որ Օսմանեան Պետութեան և երկրին կենաց համար այնքան անեղծ հաւատարմութեամբ և բարձր ոգւով աշխատի։

Վերջապէս դիտեմք թէ հայ հանճարներ կը նուիրուին Օսմանեան Պետութիւնն փրկելու մօտալուտ կործանմանէ, և յայտ յոյժ գովելի են, բայց ցաւալի իրողութիւնն այն է զի Թուրք ցեղն փրկուիլ չկամիր, և չը կան ճշմարիտ Թուրք հայրենասէրներ որ Հայ հանճարներու աջակցութեամբ գերագոյն ճիգ մ'ընեն երկիրն փրկելու, և ե ր կ ի ր ն փ ր կ ե լ ո ւ զ ա յ ն բ ա ր ե կ ա ր գ ե լ ո վ, որ է միակ միջոցն։

Ո՛ գիտէ Սուլթան Համիտ ի՞նչ ախուր զգացումներով համակեցաւ այն օր յորում ստիպեցաւ յակամայ ընդունիլ իւր Սիրելի Յակոբ Գազազեանի հրաժարն ելմտական նախարարութենէ։ Եթէ Սուլթանն մօտ է իւր ազգէն յուսահատելու, մեք հեռի եմք մեր ազգէն յուսահատելէ։ և կը խնդրեմք որ եթէ չյուսար իւր ազգն փրկել, թող վեհանձնօրէն թոյլ տայ մեզ փրկել զմերն, մանաւանդ թէ օգնէ մեզ՝ փութով քրիստոնեայ կառավարիչ մի կարգելով Հայաշատ Գաւառաց վերայ։ Եթէ այսպէս ընել բարեհաճի Հայ ազգին յաւէրժական օրհնութեանց պիտի արժանանայ Սուլթանն, սրտաբուխ և ճշմարիտ օրհնութեանց։

ՆԱՄԱԿ
ԿԻԼԻԿԻԱՑԷՆ

(«ՀԱՅՐ»ի յատուկ թղթակցէն)

6 Մարտ 1891

Անցեալ օր Մարաշի Կառավարական Պալատն և Կառավարչին տունն ուժանակով (տինամիթ) օդն հանելու փորձ եղաւ, և սակայն կերպիւ իւիք բանն իմացուած և ուժանակն վերցուած է: Թէ ոյք են այս փորձն ընելու յանդգնողներն՝ դեռ գաղտնիք է, և նոյս չկայ որ երեւան հանեն:

Զէյթունցիներուն հետ վերջին աստիճան անդթութեամբ կը վարուի կառավարութիւնն, ուր որ անոնցմէ մէկն ձեռք ձգեն կը ձերբակալեն առանց հարցուփորցի, պարզապէս Զէյթունցի ըլլալն յանցանք բաւական է: Զորս հինգ Զէյթունցիներ որ ի Հալէպ գնացած էին վաճառականութեամբ, անդ բռնուած և ի բանտ դրուած են: Կառավարութիւնն հետ զհետէ աւելի կը խստանայ: Զէյթունցին արդէն յոյժ դժգոհ էր, և այս խստութեանց նոր աճման առջեւ վախ կայ որ նորէն համբերութիւնն հատնի և ոգի ի բռին անգամ մ՚ալ ապստամբի: Ատոր ալ հետեւանքն պիտի լինի աննկարագրելի աղէտ և տառապանք:

Իւր ընտանիք այցելու համար Հալէպէն Հայ մի եկած էր ի Մարաշ: Կառավարական պաշտօնեայք ըսելով թէ գաղտնի նամակներ բերած է Հալէպէն, մարդուն տունն կոխեցին և զինքը ձերբակալեցին. խեղճին կինն և եղբօր կինը, յահէ, վիժեցին իրենց արգանդի պտուղն, և յետոյ մեռան:

Այնթապի մէջ 13 տարեկան Հայ տղայ մի երբ կը պատէր քաղքին եղերքը, Թուրք սրիկաներ զինքն յափշտակելով կը տանին ի քարայր մի և անոր վերայ անասելի անօրինութիւն կը գործեն: Ոճրագործներն ծանօթ են և սակայն անպատիժ կը մնան:

Նոյն քաղաքին մէջ, Հայ ներկարար մը իւր տանիքն մանած սփռելու կ՚ելնէ. իրեն տան ետեւն գտնուող Թուրք տունէն կը պոռան թէ ինչու այս կեավուրն իրենց տունն կը նայի: 20—25 Թուրք բրօք և քարօք կը յարձակին, կը հայհոյեն, կը դանակոծեն այր մարդիկն և կանանց ու աղջկանց ալ ծեծէն բաժին կը հանեն՝ անոնց ծամերէն քաշելով:

Աղքատութեան վերջին ծայրն հասած են բազում ընտանիքներ: Կառավարութիւնն անդթաբար տուրք կը պահանջէ այնպիսիներէն որք իրենց գաւակաց չոր հաց չեն կրնար հայթայթել միշտ, և երբեմն 24 ժամ անուշաղ կը մնան: Հարկահաւաքներն ասոնց կահ կարասիներու անհրաժեշտներն մինչեւ անգամ կառնուն կը տանին տրոց փոխարէն: Ճամիներն լեցուած են Հայ աղքատաց կարասեօք:

Մարաշի բանտին մէջ առաւել քան 70 Զէյթունցիներ կային: Մարտ 2 ի գիշերն ասոնք չորթայակապ ղրկուեցան ի Հալէպ: Տեսնենք ինչպէս պիտի տարուին ճամբան և ինչպէս պիտի ընդունուին հոն:

ՄԱՐՏԻԿ ԱՍՏՈՒԾՈՑ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ

. . . Խմբ. «ՀԱՅՐ» Կիսամսեայ Հանդիսի.

Ի սկզբանէ ձեր ազգօգուտ թերթի հրատարակութեան Կեդ. Ցանձնախմբի դրութեան մասին եղած գրութիւններն կը նկատեմք Ազգային Դատին համար շահաւոր և միանգամայն հարկաւոր: Ատով կը յանդգնիք «Հայք ոչ միաբանին» առակն իւր բացասակա նի փոխել, եթէ յաղթէք ձեր յաղթութիւն փառաւոր պիտի ըլլայ:

Իմ շրջապատիս մէջ իզանազան Նահանգներ, ո՛ր հայու որ հանդիպած եմ այս միջոցի ամենասիրելի ըլլալն լսած եմ, մինչև անգամ Ամերիկացի բարեկամներէս մին, որ Տերութեան մէջ բարձր դիրք կը բռնէ և Հայկական Խնդիրն կը պատուէ, ըսաւ ինձ թէ «Այս բոլան իմ վերայ ամենէն աւելի նպաստաւոր տպաւորութիւնն ըրաւ, միմիայն և ան ալ օրինաւոր ձև, հզօրապէս գործելու:»

Կը զարմանամ որ, քանի օր ժողովուրդն ասոր համոզուած է, ձեռք չառներ միջոցներ զայն իգործ դընելու: Աւելի ևս կը զարմանանք որ Արմէնիա թերթն այս կէտին նկատմամբ բան մը գրած չունի. որպէս թէ գաղթականութիւններն չեն փափաքիր իւր կարծիքն լսել:

Գիտենք թէ Փորթուգալեան էֆէնտին «Հայրենասիրական Միութիւն» մը ունի, և ատիկա կեդրոն կը համարէ: Ես չեմ ուզեր «ՀԱՅՐ»ի մէջ արդէն բերուած փաստեր կրկնել. միայն կը փափաքիմ որ Արմէնիա հաճի հերքել, և կամ ջատագովել այսպիսի կարևոր մի կէտ. զի իբր ինպաստ Հայ-հանրութեան ազատական մի թերթ տեղ նուիրելն, հանրութեան խորհրդակից ըլլալ ըսել է:

Ես չեմ ուզեր ըսել թէ «Հայրենասիրական Միութիւն» անօգուտ է: Բայց չեմ կրնար նաև ըսել անոր ըրած և ընելիք օգուտներն ալ մեր դատին: Կարելի է շատ օգուտ ըրած է, և կարելի է որ Հայն ինքզինք կառավարելու օրուան հասցնէ. բայց կարելի է կ՚ըսեմ և աւելիին չեմ համարձակիր: Կուզեմ յուսալ և վստահիլ բայց չեմ կըրնալ յուսալ և վստահիլ, ինձ վստահութիւն ներշնչելու պայմաններն չեմ կրնար տեսնել: Փորթուգալեան էֆէնտիի համար կ՚ըսեն թէ, նա փորձառու և հայրենասէր մի գործիչ է. չեմ պնդեր ատանկ է՝ կամ չէ, որովհետև զինքն ըստ բաւականին չեմ ճանչնար: Գալով իր գործակիցներուն, գանձապետին, և այլն. կարելի է, որ հայրենասէր և փորձառու անձինք ըլլան. բայց ես անոնց նկատմամբ ամենևին բան մը չեմ գիտէր. մինչև անգամ Փորթուգալեան էֆէնտիի գանձապետ և ուրիշ պաշտօնեայներ ունենալն չեմ գիտէր: Նուիրատուութիւններն ինչպէ՞ս կը գործածուին, ո՞վ է հաշուակալ, ո՞վ է համարառու այսպիսի կէտերն որ ընկերութեան մը առաջին սկզբունքն պէտք է ըլլայ, կա՞յ թէ չկայ, չգիտեմ:

Չեմ կրնալ պնդել թէ անշուշտ կան. կը խորհիմ թէ ըլլալու էին: Արդեօք հաւատարի՞մ են այդ պաշտօնեայք ստակներն գործածելու մասին, չգիտեմ, ե՞ն թէ չե՛ն:

Ծառ իպտղոյ իւրմէ ճանաչի: Դեռ ազգն Փորթուգալեանի միութեան պտուղն չէ տեսած. ուրեմն ոչ կրնանք դատել ու ոչ ալ դատապարտել:

Կարելի է առարկուի թէ—այն գաղանի ընկերութիւն մէ, չըլլար որ պաշտօնէից անուններն ծանուցուի և գործերն ալ գաղանի պէտք է մնայ։ Միթէ այդ պաշտօնեայներուն մէջ չկա՞ն անանկներ, որոնք եւրոպաբնակ ըլլալով Թուրքէ երկիւղ չունենային։ Ծառն ալ իր սընունդ գաղանի կ'ընդունի, բայց պտուղն աշխարհի տեսութենէ չկրնար ծածկել։ Փորթուգալեանի ընկերութեան ծաղիկն անգամ տեսած չենք։

Հնչակի Ցանձնախումբն աղէկ կամ դէշ պտուղ մը տուաւ և իր ընդունած նուէրներն չէ թէ միայն իր թերթը հրատարակելու գործածեց, այլ իր համոզման համեմատ բան մը ընելու կարողացաւ։

Քանի որ իրաց վիճակն այսպէս է, ազգին ստակներն յանձնելն այնպիսի ընկերութեան մը որուն միայն տեսուչն կը ճանաչենք քիչ շատ, և ուրիշ պաշտօնէից դոյութիւնն անգամ չենք գիտեր, ի՞նչ բան մեզ կը վստահացնէ թէ ապագային մէջ պտուղն պիտի տեսնենք։

Կազմակերպենք կեդրոն մը, դնենք այդ կեդրոնին մէջ կարող անձինք նման Զերազի և Փորթուգալեանի։ Ցայնժամ թերահաւատներն թէ հարուստ և թէ աղքատ՝ վստահութիւն պիտի ունենան և գործը տարբեր երեւոյթ պիտի առնէ։

Տէր, հաճեցէք այս յօդուածիս տեղ մի շնորհել ձեր ազգանուէր թերթին մէջ և ընդունեցէք յարգանքներս։

Գ. Մ. Եաղուպեան

Քոթէճ Սիթի Մէս.
Ապրիլ 11 1891

ՀԱՅԿ. ՄԻՈՒԹԵԱՆ

Ապրիլ 11 ի նիստն

Սոյն նստի մէջ Հայկ. Միութեան նորընտիր անդամներէն Տիար Մարուքեան ջութակ նուագեց և նորէն ապացոյց իւր երաժշտական տաղանդն։ Տիար Թաւշանճեան ապա բանախօսեց կրթութեան և ընկերասիրութեան վերայ որպէս կրնայ գործի մէջ եփած և փորձառու մէկն խօսիլ։ Տիար Թաւշանճեան գիտէ հաճելի պատրաստաբանութեամբք զբօսցունել իւր ունկնդիրներ՝ զայնս հրահանգելով հանդերձ։ Ցընթացս բանիցն երբ բացատրել ուզեց թէ ո՞րն է յառաջ, կրթութի՞ւնն թէ բնութիւնն, պատմեց Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքաց միոյն վէճն Եպարքոսին հետ ճիշդ նոյն նիւթին վերայ։ Եպարքոսն, հաստատելու համար թէ կրթութիւնն որքան հզօր է, հրամայեց իւր կիրթ կատուին բռնել թաթերուն մէջ վառած մոմ մի, ինչ որ կատուակն յաջողութեամբ կատարեց։ Ցաջորդ այցելութեան համար Պատրիարքն պատրաստուեցաւ։ Երբ կատուն նորէն բռնած էր մոմն, Պատրիարքն հանեց երեւան փոքրիկ ծուղակ մի և արձակեց մուկ մի, ի տես որոյ իսկոյն կատուն ձգեց մոմն և վազեց մկան ետեւէն։ «Ո՞րն է հզօրագոյն» հարցուց յայնժամ Պատրիարքն, «կրթութի՞ւնն թէ բնութիւնն։» «Այս անգամ յաղթեցիր ինձ,» պատասխանեց Եպարքոսն։

Հայկ. Միութեան հինգերորդ տարեդարձի հանդէսն պիտի կատարուի Ապրիլ 25 ին, Իսթըրն Սթար Հօլի մէջ, 7 րդ փողոցի և Գ. Ավինիւի անկիւնն։ Բոլոր Հայ Գաղթականութեան համար մուտքն ազատ է, և ամէն ոք ջերմապէս կը հրաւիրուի։

ՀԱՅԵՐ ԵՒ ԴՈՒՌՆ

(Ա.թլանթիք Մընթլիի Ապրիլի թիւէն թարգմանեալ)

Արեւելեան Խնդիրն բազում ճգնաժամեր ունեցած է, բայց Հայոց ներկայ անհանդարտութիւնն կրնայ Տաճկաստանի ամբողջութեան և Եւրոպայի խաղաղութեան համար քան զամենայն վտանգաբերն հանդիսանալ։ Ոմանք կը փոքրըկացունեն, այլք կը չափազանցեն այն յուզումն, որոյ գործիչքն անտարակոյս նշանաւոր, փառասէր և ճարտար մարդիկ են։ Հայոց պահանջմանց գլխաւոր նեցուկն է Պէրլինեան դաշնագրոյ 61 րդ յօդուածը։ Արուեստաք, բանաստեղծութիւն, աւագ մարդիկ, զարմանալի վէպն ու պատմութիւնն Ցունաստանի շարժեցին գիտնոց և զինուորաց աւիւնն և բերին մեծ ակրութիւններն յօգնութիւն իւր։ Հայոց պատմութիւնն, թէ և ոչ անչահեկան, չունի և ոչ երբէք ունեցած է եւրոպեան երեւակայութեան վերայ ազդեցութիւն հանդոյն յունականին։— Վերջին 2500 ամաց մէջ, Հայեր հազիւ մէկ ու կէս դար վայելած են որոշ քաղաքական անկախութիւն։ Իրենց պատմական գոյութեան կարի մեծ մասն անցած է ընդ վեհապետութեամբ Պարթեւաց, Պարսից և Հռովմայ։ Իրենց հարստութիւնք կամ Արշակունի ցեղէ էին, Պարթեւական Գահուն խնամի, կամ բագրատունի, Հրէական ընտանիքէ։ Հնոյն Հայաստանի սահմանք որոշ չեն, այնպէս որ քաղաքագէտք կարենան ճիշտ պահանջներ հիմնել անոնց վերայ վասն վերահաստատման նախկին Հայ տէրութեան։ Կը տեսնեմք թէ իրենց դատն ուրիշ ուղղութեամբք թէեւ մեծապէս կը թերանայ, Պիուլինի դաշնագրով կ'ընդունի բաղդատական այն կարեւորութիւն, զոր այլապէս չէին կրնար տալ նմա։

Հայկական յուզման ծանր հնարաւորութիւնք յայնմ են զի Ռուսիա 61 րդ յօդուածին վերայ ենլով, կրնայ գովելի և մարդասիրական երեւոյթով յառաջ անցնիլ Հայերուն օգնելու համար, ինչ որ չէր կրնար ընել Պուլկարիոյ դէպքին մէջ, միւս կողմանէ Հայոց երկրային անկախութիւն չնորհելու սահմանել զԹուրքիա պիտի լինէր վերջին աստիճան վտանգաբեր Օսմանեան Պետութեան կենացն։

Հայերն հետեւեալ պատճառներն յառաջ կը բերեն ի նպաստ իրենց ազատութեան վերահաստատման։ Կ'ըսեն թէ իրենք քրիստոնեայ են, իրենց երկիրն առաջին քրիստոնեայ տէրութիւնն եղած է, և թէ այլակրօն դրացիներէն բազմադարեան հալածանք կրած են, ուստի և քրիստոնեայ աշխարհն պէտք է նմա օգնէ հեթանոսի և անհաւատի լծէն ազատելու։ Մեք կը պնդեմք թէ կրօնի խնդիրն պէտք է արտաքսուի քաղաքական խնդրոց մէջէն. քաղաքագիտաց խորհրդածութիւնք պարտին առաջնորդուիլ առանց ընդունելու կրօնն իբրեւ տարր ազգային կամ ցեղային խնդրոց։ Քաղաքային, ոչ թէ կրօնական, շահուց հասարակաց հանգամանքն է որ ազգ մի կը յօրինէ։ Աւելի ողջամիտ սկզբանց վերայ հաստատեալ համակրութեան մի պիտի արժանանան Հայք եթէ իրենց իրաւունքներ պահանջեն ոչ թէ վասն զի իրենց տիրողներն Մահմետական են այլ վասն զի իրենք Հայ են։ Մարդկային համակրութիւնն չնորհելի է հարստահարելոց ոչ հաւատայ միութեան այլ մարդկային եղբայրութեան սկզբամբ։

Նկատելով զինդիրն այս տեսակէտէ, կը պնդեմք թէ Թուրքք այնքան իրաւունք ունին իրենց իշխանութիւն պահելու քրիստոնէից վերայ որոց տիրեցին իրենց զինուորական հանճարով՝ որքան Անգղիացիք ունին Հնդկաստանի մահմետականաց վերայ իշխելու։ Դարձեալ, ըստ հաստատեալ օրինաց որ կը հրամայէ յարմարագունին յետակեցութիւն (survival) և հզօրագունին իշխանութիւնն, անդստին ի չնչին միջատէ ցմեծագոյն մարդն, օրէնք մի որ միշտ պիտի տիրէ յայսմ աշխարհի, Տաճկաստան ունի անվիճելի իրաւունք իշխելու մինչեւ որ հզօրագոյն ոմն հանէ ի նմանէ այդ իրաւունք։

Բայց, կ'ըսեն Հայերն. «Մեք յանչափս կը հարստահարիմք ի Տաճկաց։» Այս եթէ բոլորովին ճշմարիտ լինէր, պիտի ծառայէր իբրեւ յոյժ զօրաւոր փաստ մի ի նպաստ այժմ յառաջ տարուող յուզման։ Ի՞նչ են իրողութիւնք։ պարտ է ընդունիլ, դժբաղդաբար՝ թէ այդ ժողովրդեան այժմու վիճակն շատ դառն է։ Տուրք ծանր են, կառավարիչք՝ կեղեքող, և Քուրդք՝ կողոպտող։ Եթէ ապացուցուած լինէր թէ միայն Հայերն յատկապէս նշաւակ եղած են այս չարեաց, կամ թէ նոքա մասնաւոր ատելութեան առարկայ են, կամ թէ քրիստոնեայ աշխարհի մէջ քան զամենայն աւելի տագնապեցուցեալ ժողովուրդն են, յայնժամ յիրաւի պարտէր քրիստոնեայ աշխարհն ոտքի ելնել, նեռել Թուրքն իւր գահէն, և ժողովելով Հայերն աշխարհի ամէն կողմէն, վերահաստատել զայնս Հայաստանի լեռնադաշտին վերայ, և պատեհ ընձեռել նոցա իրենց ազգային գոյութեան խնդիրն կարգադրելու։ Բայց իրողութիւնն շատ հեռի է այսպէս լինելէ։ Քրդաց մասին կ'ըսեմք թէ նոքա միշտ, անդստին ի հնուց, անկարգ և մասնիչ և անդութ եղած են։ Գալով Թուրք պաշտօնէից հարստահարութեան, քաջածանօթ իրողութիւն մ'է թէ նոքա անձի աշառութիւն չեն ըներ. նոցա փոյթ չէ թէ հպատակն Յոյն է, Հրեայ է, Հայ է կամ Թուրք։ Եւ ոչ ալ Հայերն այն աստիճան կը հարստահարուին որքան ուրիշ քրիստոնեայ ժողովուրդք ոմանք։ Հայերն բանակի մէջ չեն ծառայեր։ Արուեստից և վաճառականութեան համար ամենայն ապատութիւն կը վայելեն։ Սովորաբար կարծուածէն աւելի ալ կրօնական ազատութիւն կը վայելեն։

Շնորհենք սակայն ամէն ինչ որ կը պնդեն իրենք ազգային անկախութեան ի նպաստ, ի՞նչ յոյս կայ որ Հայք հասնին իրենց նպատակին այսպիսի միջոցներով։ Բնաւ յոյս չկայ։ Ուժով, բարեձեւ, փառասէր, աշխատասէր, և տնտես ժողովուրդ մ'են Հայերն. թերեւս ոչ փայլուն, բայց կարի լուրջ են։ Ասիացի են և հին ասիական ոչ սակաւ սովորութիւններ և հանդամանք պահպանած են, և սակայն աւելի դիւրընտել են քաղաքի կենցաղային և Եւրոպեան սովորութիւց և խորհելու եղանակաց քան ուրիշ ոեւիցէ Ասիացիներ։ Աւելի քան չորս միլիոն չեն Թուով, որոց հաւանօրէն մէկ միլիոնն քաթոլիկ են, որք փոյթ չունին նոր Հայաստանի մի համար եղած շարժման մասնակցելու, չկայ ոեւիցէ վայր մի ուր գտնուի Հայերու գնահատելի բազմութիւն մի՝ հաւասար նոյն վայրին ուրիշ ժողովուրդոց։ Պատերազմասէր ժողովուրդ մի չեն, որով ըսել չենք ուզեր թէ կը թերանան յոգւոյ և ի քաջութենէ, այլ անօգուտ է ուրանալ թէ իրենց պատմութիւնն զինուոր ազգի մի պատմութիւնն չէ։ Տակաւին, եթէ անոնց մէկ կամ երկու միլիոնն կեդրոնացեալ լինէին լեռնային դաւառի մի մէջ, որպէս Չէրքէզներն էին, կատարեալապէս զինեալ և կազմակերպեալ, և կռուելու սովորած, յայնժամ կրնային պատկառելի ճակատ մի պարզել ընդդէմ յարձակման, և ինքեանք առնուլ յարձակողական դիրք մինչեւ որ արտաքուստ յարգանք և օգնութիւն ընդունէին, ինչպէս եղաւ ի յեղափոխութեան Յունաց։ Սակայն Հայոց մէջ ասոր գէթ հեռաւոր նմանութիւն ունեցող վիճակ մի չկայ։ Ի՞նչ կրնան Հայք ընել, անօգնական, Օսման. հզօր բանակին դէմ։ Ոճիր է ապստամբութիւն մի ընել և հանրային խաղաղութիւնն վրդովել երբ յաջողութեան բանաւոր յոյս չկայ։

Կրնայ Եւրոպական Տէրութեանց կոչում լինիլ միջամտելու, քանի որ նոքա Հայոց իրաւունքն ճանացած են դաշնագրով։ Բայց հաւանական չէ որ նոքա ևս միջամտեն։ Նաեւ խոշոր անարդարութիւն մի պիտի լինէր ստիպել զԹուրքիա ազատ կացուցանելու Օսմանեան Հայաստանն եթէ Պարսկաստան և Ռուսիա ևս Հայոց հողէն իրենց ձեռք գտնուած մասերն չվերադարձունեն։

Ուրեմն Եւրոպայէն չիք այլ օգնութիւն Հայոց համար բայց եթէ ռուսական միջամտութիւն։ Ռուսիա միայն է որ դէտակն ունի պատեհ առթի և ժամու։ Նորա գործիչք ամէն ուրեք կը գրգռեն Հայերն յապստամբութիւն։ Հայերն ազատելու պատրուակաւ Ռուսիոյ մէկ նոր պատերազմին ընդ Թուրքիոյ առաջին արդիւնքն կըրնայ լինիլ Հայոց ազատութիւնն, և առժամեայ հաստատումն փոքր Հայկական Տէրութեան մի, ի հարկէ ընդ գրովազգութ թեւարկութեամբ Սուրբ Ռուսիոյ։ Սակայն վախճանն պիտի լինի այդ Տէրութեան արագ ընկղմումն Ռուսիոյ մէջ։

Լաւագոյն բարեկամք այս վերջին աստիճան չահագրգիռ և յառաջադէմ Հայ ժողովուրդեան չեն կրնար չզգալ թէ իրենց համար իմաստնագոյն ընթացքն է, ուրեմն, չափաւորութեամբ և համբերութեամբ հաստատել եղանակ կելոյ մի իրենց և կառավարութեան միջեւ, ամեն կերպիւ ջանալով վերահաստատել այս վերջնոյս վստահութիւնն իրենց հաւատարմութեան և հպատակութեան վերայ։ Այս ընթացիւք կրնան հետզհետէ աւելի հաճելի լինիլ և թերեւս վերջապէս Սուլթանին հարկատու հայկական նահանգ մ' ընդ Հայ կառավարչաւ ունենալ։

Բայց եթէ Հայք թողուն որ անսկզբունք յուզիչներ մղեն զիրենք յայսանի ապստամբութեան, պիտի ստիպուին ահագին թշուառութիւն կրել երբ Թրքերն որոշապէս իմանան իրենց նպատակն։ Եթէ յաջողին իսկ Օսմ. Պետութեան անկումն յառաջ բերել, իրենք զիրենք պիտի ընկղմէին յանդունդ ազգային չքութեան ի փորի ամենակուլն Ռուսիոյ։

Թուրքերն յոռեգոյնն կամ անգթագոյնն չեն ժողովրդոց, և ոչ ալ Հայերն քան զամենայն հարստահարեալքն յաշխարհի։ Գործունէութիւնն և ճարտարութիւնն իրենց կողմն ունին Հայք, և եթէ այս յատկութեանց վերայ յաւելուն համբերութեան իմաստութիւնն, Բաղդն վերջապէս թեր պիտի ելնէ իրենց։

Ս. Կ. Ու Պէնճէմին

ՆՈՐ
ՊԼԻՈՒ ՊՈՒՔԷՆ

Նոր Պլիու Պուքէն համառօտելով կը թարգմանեմք հետեւեալ կտորն, որ կը ցուցնէ թէ Օսմանցիք որքան կարեւորութիւն կ'ընծայեն Հայրենասիրական Ցանձնախմբոց որ ի Լօնտրա և ի Փարիզ։

Ցիշատակագիր ի Մր. Ալվարէզէ
(Ներփակեալ ի Թ. 1)

... Ցընթացս խօսակցութեան Նորին Վսեմութիւն (ճէվտէթ Փաշա) հարցուց ինձ առանց դարձուածոյ թէ ինչ է նպատակն Հայ Ցանձնախմբոց ի Լօնտոն և ի Փարիզ։

Պատասխաննցի թէ հարկաւ ես չգիտէի, սակայն ըստ որումմեր խօսակցութիւն էապէս ոչ — պաշտօնական էր, ըսի թէ, անձնապէս կը կարծէի թէ նոցա բաղձանք էր յիւրեանց կրօնակցաց բնակեալ գաւառաց համար վարչական մեծ բարւոքումներ ձեռք բերել։

Փաշան յայնժամ հարցուց թէ ինչպէս կրնային նոքա պնդել թէ իրենք մեծամասնութիւն կըկազմեն այն երկրի մէջ զոր իրենք Հայաստան կը կոչեն, և ուր իրօք անյոյս փոքրամասնութիւն մ' են իրենք, և առ այս յառաջ բերաւ վիճակագրական թղթեր վերաբերութեամբ բնակչաց Էրզրումի, Վանայ, Պիթլիզի, Տիարպէքիրի, Մամուրէթ Իւլ Ազիզի (Խարբերդ), Հալէպի, Ատանայի, և Սիվասի Վիլայէթներուն։ Թիւերն զորս ընթերցաւ ինձ, բաղդատմամբ Միւսիւլման և ոչ — Հայ ժողովրդոց թուոյն, յայտնապէս աննպաստ էր Հայ բնակչաց մեծամասնութիւն լինելուն։ ... Ցիշողութեամբ այն յօդուածոց զորս Դեսպանն հաճած էր ինձ ցուցնել՝ նշանակեցի Փաշային թէ գաւառաց մէկ մեծ մասն զոր ինքն այնպէս ներկայացուց որպէս թէ Ցանձնախումբք կը հռչակէին լինիլ Հայկական, չէին պարունակեր այն երկրի մէջ որոց համար այս Ցանձնախումբք կը պահանջէին բարւոք վարչութիւն, և թէ ոչ ոք կը խորհէր պնդել թէ ինչ ինչ գաւառներ, ինչպէս Հէքքեարի, օրինակի համար, Հայկական հանգամանք ունէին։

Նաև յիշեցի թէ Հայերն իրենց հաշուոց մէջէն դուրս կը թողուն թափառայած ցեղերն, որպիսի են Քրդերն, յորոց կը կրեն ոչ սակաւ նեղութիւն։

Այս արտաքսման դէմ Փաշան յոյժ բնականօրէն բողոքեց։

(շարունակելի)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ Լոյս տեսաւ

ԼՈՑՍ ԵՒ ԽԱՒԱՐ

Գրեց — Հ. ԿԻՐԱԿՈՍ ԲԱՐԱԿԵԱՆ

136 երեսներէ բաղկացեալ գրքոյկ մ'է, որ կը խօսի Նոր Աշխարհի լուսոյն և խաւարին վերայ, լաւ և յոռի սովորութեանց և բարուց վերայ, և յաճախ կը բաղդատէ Ամերիկայի կացքն ու գնացքն արեւելից մէջ տեսնուածներուն։ Գինն է 25 սենթ, կեդրոնատեղին է հեղինակի տունն

162 West Street, Worcester, Mass.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՅԲ» ի բաժանորդագրութիւնք ամբողջ 1891 տարուն համար կ'ընդունուին։ Որ ամսոյ մէջ ալ որ լինի վճարուին, կը հաշուի Յունվար 1 էն և կը յղուի Թերթիս Ա. թուէն սկսեալ։

Պարսկաստանի Հայոց համար՝ բացառութիւն ընելով, Թերթիս տարեկան բաժանորդագին կը նշանակեմք եօթն ուկէս ֆրանք։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ՈՒՂՂԱՓԱՌ ՍԵԿԵՂԵՑԻ

Ամէն Կիւրակէ ժամ 1.30 ին յետ միջաւուր՝ առաւօտեան ժամերգութիւն կը լինի։ Նաեւ ամէն հինգշաբթի երեկոյ, ժամ 7.30 ին Եկեղեցական երաժշտութեան վարժութիւնք կը լինին։

ՍԲ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ
Ի ՆԻՒԵՕՐՔ

ԸՆԹԵՐՑՈՂ
ՀՐԱՆՏ ՄԵՍՐՈՊ ՔԻՐԷՃԵԱՆ

Ամէն Կիրակի, յետ կէս աւուր ժամ 2.30 ին ի Կրէյս Մասրան, Պրօտուէյ և Տասներորդ Փողոց, կրօնական պաշտամունք կը կատարուին հայերէն լեզուաւ և Եպիսկոպոսական դրութեամբ։

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 SEVENTH AVE., BET 26 TH & 27 TH STS., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագրեր կը պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սենթ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԴԱԲՐԻԷԼԵԱՆ